

# «Լիդիան» (Ամուլսարի ոսկու հանքավայրի) - ծրագրի ընդլայնում

Երկիր՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը՝	48579
Բիզնես ոլորտ՝	Բնական պաշարներ
Ծանուցման տեսակը (պետական/մասնավոր)՝	մասնավոր
Բնապահպանական կարգ՝	A
Խորհրդի նիստը նշանակված է՝	2016թ. հուլիսի 20-ին
Կարգավիճակը՝	Միջոցների տրամադրում
Ծրագրի ամփոփված փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝	2016թ. մայիսի 19-ը

## Ծրագրի նկարագիրը

Ավելի քան հինգ տարի «Լիդիան» ընկերությունը պատրաստվում էր Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործմանը և այժմ ապահովել է ֆինանսավորում՝ սկսելու հանքավայրի շահագործումը: Բանկը «Լիդիան» ընկերությանը տրամադրում է կապիտալի բաժնեմասնակցություն, որը նախատեսված է շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության մեղմացման միջոցառումների և հարակից գործողությունների ֆինանսավորման համար (ինչպես սահմանված է ՇՄՍԳՊ-ում, այդ թվում՝ կենսաբազմազանության բալանսի պահպանման ծրագրի և ջրի մաքրման կայանի կառուցման ֆինանսավորման համար):

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ծրագրի ազդեցությունն անցումային շրջանի վրա բխում է հետևյալից.

i) Աջակցություն մասնավոր հատվածի զարգացմանը

Ընկերությունը մի շարք մասնավոր հանքարդյունաբերական ընկերություններից մեկն է, որը Հայաստանում իրականացնում է երկրաբանահետախուզական աշխատանքներ: Բանկը աջակցում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈԻՆ) ծրագրին տարածաշրջանի արդյունահանող արդյունաբերության ոլորտում և Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստող՝ մասնավոր հատվածի սկսնակ ընկերության զարգացմանը: Ծրագիրը կարող է ծառայել որպես մոդել նմանատիպ մասնավոր ընկերությունների համար՝ Հայաստանի շուկա մտնելու առումով:

ii) Կորպորատիվ կառավարման և բիզնեսը վարելու չափորոշիչների սահմանում

Վաղ փուլում Բանկի ներգրավումը թույլ կտա ձևավորել Ընկերության չափանիշներն այնպես, որ ծրագիրն իրականացվի համաձայն ոլորտի լավագույն փորձի, այդ թվում՝ ծրագրի բնապահպանական և սոցիալական ասպեկտների կառավարման առումով: Նման չափանիշների ընդունումը կարելի է նաև ի ցույց դնել տարածաշրջանում՝ որպես դրական ազդեցության օրինակ: «Լիդիան» ընկերությունը պարտավորվում է ընդունել բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության չափանիշների նկատմամբ ՎՋԵԲ-ի կիրառվող պահանջները:

## Հաճախորդի մասին

«Լիդիան Բնօրենյալ» ՍՊԸ-ն հրապարակային բաժնետիրական կորպորացիա է, որը գրանցված է Ջերսիում, Նորմանդյան կղզիներ, և ցուցակված է Տորոնտոյի ֆոնդային բորսայում: Հայաստանում «Լիդիան» ընկերությանն են պատկանում մեկ հանք և մի շարք երկրաբանահետախուզական ակտիվներ, իսկ հիմնական ակտիվը Ամուլսարի ոսկու հանքավայրն է:

## ՎՋԵԲ-ի կողմից տրամադրած ֆինանսավորումը

Բանկը նախատեսում է ներդնել մինչև 10,5 մլն կանադական դոլար՝ ձեռք բերելու Ընկերության բաժնետոմսերը որպես կապիտալի ավելացման մի մաս: Միջոցները կօգտագործվեն ծրագրի մաս կազմող բնապահպանական և սոցիալական ազդեցության մեղմացման միջոցառումների ֆինանսավորման համար:

# Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ամփոփ նկարագիր

Ծրագիրը ստացել է A կարգի դասակարգում ՎՋԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության համաձայն (2014թ.): Բանկի նախկին ներդրումները «Լիդիան» ընկերությունում դասվել էին B կարգի, քանի որ գումարը օգտագործվել էր երկրաբանահետախուզական աշխատանքների համար, որտեղ բնապահպանական և սոցիալական ռիսկերն աննշան էին իրենց չափով և բնույթով: Այժմ, երբ այդ հանքավայրը մտնում է շինարարության և շահագործման փուլ, ներդրումը ստացել է A կարգի դասակարգում, որի դեպքում պահանջվում է անցկացնել Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՄԱԳ), որը պետք է իրականացվի և հրապարակվի համաձայն ՎՋԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջների:

Որպես ընկերության ներկայիս բաժնետեր, Բանկը և բնապահպանական ու սոցիալական հարցերով անկախ խորհրդատուն մանրակրկիտ կերպով մշտադիտարկում էին ծրագրի առաջընթացը, այդ թվում՝ մանրամասն ուսումնասիրում էին ՇՄՄԱԳ-ում տարբեր գործողությունների հաջորդականությունը, կատարում բազմաթիվ այցելություններ դեպի աշխատանքային տարածք, աշխատաժողովներ կազմակերպում և շարունակական երկխոսություն վարում ընկերության և նրա խորհրդականների հետ: Վերջին չորս տարիների ընթացքում տեղի ունեցան հանքի պլանի մի շարք փոփոխություններ, որի արդյունքում պահանջվեց ծրագրի ՇՄՄԱԳ-ում համապատասխան փոփոխություններ անել և նորից հրապարակել այն: ՇՄՄԱԳ-ի վերջնական տարբերակն այժմ պատրաստ է և հրապարակվել է, և ընթանում է հանրային քննարկում:

Անկախ խորհրդատուի և ՎՋԵԲ-ի կողմից անցկացված ՇՄՄ փորձաքննությունը ցույց է տալիս, որ, չնայած Ծրագիրը պարունակում է ՇՄՄ մարտահրավերների լայն շրջանակ, ՇՄՄԱԳ-ը և հանքավայրը կարող են ունենալ այնպիսի կառուցվածք, որպեսզի համապատասխանեն ՎՋԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներին: ՇՄՄ փորձաքննության արդյունքում բացահայտված խնդիրները ներառում են.

- Հնարավոր ազդեցություն ռազմավարական կարևորություն ունեցող մակերևութային ջրի հատկանիշների վրա. Ծրագրի կույտային տարրավազման կայանում ցիանիդի օգտագործումը առաջացրել էր էական մտահոգություն շահառուների և իշխանությունների շրջանում և հանգեցրել հանքի կազմաձևման նախորդ փոփոխությանը: ՇՄՄԱԳ-ը ցույց է տալիս, որ տեխնիկական տեսանկյունից ռիսկերը կարող են համարժեքորեն կառավարվել:

- Տեղական համայնքները և զբոսաշրջությունը. հանքարդյունաբերական գործունեությունը կհանգեցնի նրան, որ մշտապես կփոխվի տարածքի արտաքին տեսքը և լանդշաֆտը՝ սարի գագաթի հեռացման և հանքի ենթակառուցվածքների շինարարության պատճառով: Բացի այդ, հանքի շրջակայքում երթևեկությունը, բնակչության ներհոսքը և հանքավայրի աշխատողներին

բնակարաններով ապահովելը ազդեցություն կունենան տեղական համայնքների և տարածքի տուրիստական ներուժի վրա: Դրան հակառակ, տեղի բնակչության համար աշխատատեղերի ստեղծումը և ՓՄՁ-ների զարգացման հնարավորությունները ծրագրի հիմնական դրական կողմերից են, և դրանք պետք է բարեխղճորեն կառավարել՝ ծրագրի օգուտները առավելագույնի հասցնելու նպատակով՝ միևնույն ժամանակ կառավարելով իրատեսական սպասումները:

- Հողի օտարման ընթացակարգերը. Ծրագրի համար հողի օտարումը հիմնականում ավարտված է, և Բանկի կողմից ենթարկվել է խիստ մոնիթորինգի՝ ապահովելու, որպեսզի բավարարվի Կատարողականի նկատմամբ 5-րդ պահանջը:

- Կենսաբազմազանության վրա ազդեցություն. հանքը ազդեցություն կունենա խիստ զգայուն, միջազգայնորեն պահպանվող ֆլորայի (*Potentilla բույսեր*) և ֆաունայի (գորշ արջ) վրա, և ստեղծվել է կենսաբազմազանության բալանսի պահպանման ծրագիր՝ իրականացնելու Կատարողականի նկատմամբ 6-րդ պահանջով սահմանված նպատակները: Առաջարկված ծրագիրը մանրամասնորեն ուսումնասիրվել է և ներառվել ՇՄՍ Գործողությունների պլանում, որի իրականացումը խստորեն կվերահսկվի բաժնետերերի խմբի կողմից:

- Տեղական, ազգային և միջազգային շահագրգիռ կողմերը մտահոգություններ են հնչեցրել ծրագրի նախապատրաստման ողջ ընթացքում, և այդ մտահոգությունները հաշվի են առնվել ՇՄՍԱԳ-ի վերջնական տարբերակի մշակման ժամանակ: Բացի այդ, ձեռնարկվել են Շահագրգիռ կողմերի ներգրավման ծավալուն աշխատանքներ, և դրանք շարունակվում են համաձայն Բանկի՝ Կատարողականի նկատմամբ 10-րդ պահանջի:

## **Տեխնիկական համագործակցություն**

Չնայած ծրագրի ՇՄՍ բարդությունների, ՇՄՍԱԳ-ը ցույց տվեց, որ Ծրագիրը կարող է կառուցվել այնպես, որպեսզի բավարարի Բանկի պահանջներին, և Ընկերությունը պարտավորվել է կառուցել և շահագործել հանքավայրը միջազգային լավագույն փորձին համապատասխան: Նման պարտավորություններից մեկը ազգային արգելոցի ստեղծումն է՝ որպես կենսաբազմազանության բալանսի պահպանման ծրագրի մի մաս, և Բանկի միջոցները կօգտագործվեն՝ ապահովելու, որպեսզի այդ պարտավորությունը կատարվի: Բացի այդ, կեղտաջրերի պասիվ մաքրման կայան կկառուցվի՝ ապահովելու տեղական ջրի աղբյուրների պահպանումը, շարունակաբար ապացուցելով, որ ՎՋԵԲ-ի ներդրումը կունենա ՇՄՍ օգուտներ՝ բարելավելով հանքավայրում ՇՄՍ պահանջների կատարումը:

Ընկերությունը և բաժնետերերի խումբը (այդ թվում՝ Բանկը) ժամանակի և գումարների զգալի ներդրումներ են կատարել՝ մշակելու այնպիսի ՇՄՍԱԳ, որը համապատասխանում է Բանկի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներին (և ՄՖԿ-ի՝ Կատարողականի չափանիշներին): Բանկը և այլ ֆինանսավորողները կիրականացնեն Ծրագրի խիստ մոնիթորինգ, և ՇՄՍ հարցերով անկախ խորհրդատուն հաշվետվություններ կներկայացնի ուղղակիորեն բաժնետերերի խմբին:

## Ընկերության ներկայացուցչի կոնտակտային տվյալները

Հովարդ Սթիվենսոն

[howard.stevenson@lydianinternational.co.uk](mailto:howard.stevenson@lydianinternational.co.uk)

+1 720 307 5080

[www.lydianinternational.co.uk](http://www.lydianinternational.co.uk)

Հասցե՝ 7000 S. Yosemite Street, Suite 201 Centennial, CO 80112 USA

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմեք հաճախորդի ընկերությանը:

## Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ.փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

## Հանրային տեղեկատվության վերաբերյալ քաղաքականություն (PIP)

Հանրային տեղեկատվության վերաբերյալ քաղաքականությունը սահմանում է, թե ինչպես է ՎՋԵԲ-ը հրապարակում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկությունը:

Հանրային տեղեկատվության վերաբերյալ քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելե՛ք

<http://www.ebrd.com/what-we-do/strategies-and-policies/public-information-policy.html>

## Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմ (PCM)

ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմը (ԾԲՄ/PCM), որպեսզի այն անցկացնի Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն: ԾԲՄ-ին վերաբերող գործընթացի կանոնների ռուսերեն տարբերակին կարող եք ծանոթանալ այստեղ. [www.ebrd.com/documents/occo/project-complaint-mechanism-pcm-rules-of-procedure.pdf](http://www.ebrd.com/documents/occo/project-complaint-mechanism-pcm-rules-of-procedure.pdf)

ԾԲՄ-ի ներքո ցանկացած բողոք պետք է ներկայացվի ՎՋԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամիս անց: Կարող եք կապվել ԾԲՄ-ի տնօրենի հետ ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան մշտական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում է հարկավոր ներկայացնել բողոքը: